ԴԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ Թ. ԹՈՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Մայիսի 23—24-ին Հայկական ՍՍՀ ԳԱ Գիտության փոքր դահլիճում կայացավ հայ ճարտարապետության պատմագրության հիմնադիր Թորոս Թորամանյանի ծննդյան հարյուրամյակին նվիրված ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի և արվեստի ինստիտուտի գիտական նստաշրջանը՝ մասնակցությամբ Երևանի, Մոսկվայի, Լենինգրադի և արտասահմանյան գիտնականների:

Բացման խոսքով հանդես եկավ բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Ծ. Աղայանը: Կենսագրական հակիրճ տեղեկություններից հետո նա անդրադարձավ մեծավաստակ գիտնականի հոգեկան և մասնագիտական կարողությունների ձևավորման ու դրսևորման հարցերին, նկարագրեց Կոստանդնուպոլսից Եվրոպա ու Փարիզ ճգվող նրա ծանր թափառումների ուղին և հանգրվանումը մայր երկիր, ուր քաղաքամայր Անին նրա ներշնչանքի աղբյուրը դարձավ: Տալով Ն. Մառի, Ստրժիգովսկու և ժամանակի գիտական մտքի այլ ներկայացուցիչների կողմից ճանաչված նրա աշխատանքների բարձր գնահատականը՝ Ծ. Աղայանը նշեց, որ դրանք ուղեկցվել են անպատմելի զրկանքներով ու տառապանքներով, որոնք վերջ գտան միայն սովետական կարգերի օրոք: Նա հրապարակեց Հայկական ՍՍՀ ԳԱ նախագահության որոշումը՝ չորս տարին մեկ Թ. Թորամանյանի անունով սահմանված մրցանակը շնորհելու նրա վեհ գործը շարունակող ամենաարժանավոր գիտնականին:

Ճարտարապետության դոկտոր, Հայկական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Կ. Հովհաննիսյանի (Երևան) «Թորոս Թորամանյանը հայ ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիր» խորագրով զեկուցումը ներկայացնում էր վաստակավոր գիտնականի գործունեությունը: Մինչ Թորամանյանը գոյություն ունեցող ուսումնասիրությունների դրականն ու թերին մատնանշելուց հետո զեկուցողը բնութագրեց նրա հետազոտությունները որպես վստահելի աղբյուրներ հայ ճարտարապետական արվեստը ճանաչելու, զարգացման գիտականորեն հիմնավորված պատկերն ստեղծելու գործում:

«Ճարտարապետության հազվագյուտ հուշարձան Անիի 1911 թ. պեղումներից» թեմայով զեկուցեց արվեստագիտության դոկտոր, Հայկական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Ն. Մ. Տոկարսկին (Լենինգրադ): Նա հանգամանորեն վերլուծեց Անիում գտնվող հայկական մի գմբեթավոր սրահի իր վերակազմությունը: Այն աչքի է ընկնում կառուցվածքային ու հարդարանքային մանրամասներով, թվագրվում է XI դ.: Հուշարձանը պեղվել է (Աբուլ-Մասամրանի մեծ միհարեթի փլատակների մոտ) 1911 թ. հնագիտական 10-րդ գիտարշավի ժամանակ:

Թ. Թորամանյանի սկսած գործի նշանակությունն առանձնապես ցայտուն արտահայտվեց ճարտարապետության դոկտոր, Հայկական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Վ. Հարությունյանի (Երևան), «Պատմական հայ ճարտարապետության ուսումնասիրության ետթորամանյան շրջանը» զեկուցման մեջ: Նա հանգամանորեն ներկայացրեց սովետական մասնագետների հետազոտած պրոբլեմները, հուշարձանների վերականգնման ու վերանորոգման հետ կապված աշխատանքները: Ջերմ գնահատանքով հիշատակվեց միութենական և արտասահմանյան հայ և օտարազգի գիտնականների մեծ նպաստը ճարտարապետության ուսումնասիրման ու պրոպագանդման գործում: Պարզաբանվեցին նաև այս բնագավառի հետագա ուսումնասիրությունների խնդիրները:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կ. Գ. Ղաֆադարյանը (Երևան) հանդես եկավ «Հայաստանի ճարտարապետության պատմության պարբերացման հարցի շուրջը» զեկուցմամբ: Նա նշեց, որ Թ. Թորամանյանով սկզբնավորվող հայ ճարտարապետության պատմագրությունը

ժամանակագրական ճիշտ հաջորդականություն ունենալով հանդերձ, պարբերացման ընդհանուր ընդունված համակարգ չի ունեցել և այսօր նոր հայտնագործությունները պարտադրում են վերանայել գոյություն ունեցող տեսակետները: Հիմք ընդունելով սովետահայ պատմագրության պարբերացման առկա փորձը, զեկուցողն առաջարկեց հատուկ ուշադրություն դարձնել նախնադարյան համայնական հասարակարգի, Հայաստանի քաղաքացիական և գաղթավայրերի ճարտարապետության հարցերին:

Ճարտարապետության դոկտոր Հ. Խալփախչյանի (Մոսկվա) «Հին Հայաստանի շինարարական տեխնիկայի առաջին հետազոտողը» զեկուցումը նվիրված էր Թ. Թորամանյանի կողմից պատմական հայ ճարտարապետության մեջ կիրառված շինանյութերի և զանազան կառուցամասերում նրանց ունեցած դերի հետազոտությանը: Չնայած համապարփակ աշխատության բացակայությանը, զեկուցողը գիտնականի երախտիքը շատ բարձր գնահատեց, քանի որ նրա տարբեր աշխատություններում ցրված հետազոտական նյութերը բազմակողմանիորեն ներկայացնում են այս բնագավառը:

«Աղթամարի խորհրդանշանների գոտին» զեկուցմամբ հանդես եկավ ճարտարապետության դոկտոր Ստ. Մնացականյանը (Երևան): Նյութը վերաբերում էր Աղթամարի տաճարի (X դ.) զարդագոտիներից չորրորդին, որը քանդակված է ճակատների հորիզոնական և թեք քիվերի վրա: Սակավ ուշադրության արժանացած այս քանդակներին զեկուցողը բոլորովին նոր մեկնաբանություն տվեց: Արևմտյան խաչաթևի դիմաքանդակներն, ըստ նրա, պատկերում են Արծրունյաց թագավորական տան զուգահեռ իշխանական տների ավագագույն ներկայացուցիչներին, իսկ մնացած մասերի՝ բույսերի, կենդանիների և մարդկանց ոչ կանոնական համադրվածքները՝ հիշյալ տոհմերի զինանշանները:

Պրոֆեսոր Ա. Ալպագո-Նովելլոյի (Միլան) «Թանահատի բազիլիկան և պայտաձև կամարի խնդիրը վաղ միջնադարի հայ ճարտարապետության մեջ» զեկուցումը նվիրված էր միջազգային արվեստաբանությանը վաղուց հետաքրքրող պայտաձև կամարի ծագման, զարգացման և տարածման խնդիրներին: Բերված փաստական տվյալները ցույց տվեցին այդ ձևի արևելյան ծագումը, միաժամանակ ընդգծվեց, որ պայտաձև կամարի հետազոտությունը որոշակի լույս է սփռում Արևելքի և Արևմուտքի, հատկապես Միջերկրականի շուրջը զարգացած մշակույթների փոխազդեցությունների խնդրի վրա:

Ճարտարապետության թեկնածու Ա. Զարյանը (Երևան) հանդես եկավ «Հայ ճարտարապետության ուսումնասիրությունը Եվրոպայում» զեկուցմամբ: Նա նշեց, որ հայ ճարտարապետությունը շարունակում է օտար գիտնականների ուշադրությունը գրավել և սկսում է սիստեմատիկ հետազոտության ու պրոպագանդմանն նյութ դառնալ: Այս առումով նա բարձր գնահատեց Հռոմում և Միլանում հայ ճարտարապետությունը հետազոտող գիտական օջախների ստեղծումը տեղի մասնագետների և Հայկական ՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի ջանքերով:

Ճարտարապետության թեկնածու, Հայկական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Ա. Սահինյանի (Երևան) «Մոդուլային համակարգը Էջմիածնի Մայր տաճարի V դ. գմբեթակիր կառուցվածքում» զեկուցումը նվիրված էր Հայաստանի մեզ հայտնի առաջին կենտրոնագմբեթ կառուցվածքի համաչափություններին, որոնց հիմքում գմբեթի շառավղի չափն է ընկած:

«Հայաստանի V—VII դդ. գմբեթավոր եկեղեցիների նախագծման սկզբունքները» թեմայով զեկուցեց ճարտարապետության թեկնածու Ա. Երեմյանը (Երևան): Նա ներկայացրեց V—VII դդ. գմբեթավոր եկեղեցիների նախնական տեսքի վերականգնման ուղղությամբ կատարած իր երկարատև ուսումնասիրությունների արդյունքները և ընդգծեց, որ տաճարների նախագծման և նշահարման ժամանակ ամենակարևորը հատակագծում ու ճակատներում օգտագործված կոորդինատային և շեղանկյուն կանոնավոր ցանցերն ու երկրաչափական կառուցումներն են: Ապա առաջարկեց կազմել ավերված հուշարձանների վերականգնման նախագծերը:

Պ. Կունեոյի (Հռոմ) «Վաղ միջնադարի երկու նորահայտ բազիլիկաներ Վասպուրականում» զեկուցմամբ ներկայացվեցին 1970 թ. Հռոմի համալսարանի միջնադարյան արվեստների ինստիտուտի աշխատակիցներ Վանա լճի հարավ-արևմտյան մասի գյուղերում հայտնաբերած միանավ բազիլիկաների տիպի երկու յուրահատուկ տարբերակներ: Շինարարական տեխնիկայի, կառուցվածքի և հար-

դարանքային տարրերի վերլուծության միջոցով հուշարձանները թվագրվեցին V դ.:

«Ճարտարապետական հուշարձաններում անցյալում օգտագործված և վերականգնման աշխատանքներում կիրառված շինանյութերի առանձնահատկությունները» թեմայով զեկուցեց ճարտարապետ Հու. Թամանյանը: Ներկայացնելով Հայկական բարձրավանդակում շինանյութերի կիրառման, շինարարական տեխնիկայի զարգացման ընթացքը և շինանյութերի լաբորատոր անալիզի տվյալները, նա եզրակացրեց, որ հիմքերի, պատերի, կրող կոնստրուկցիաների, ծածկի համար նախատեսված շինանյութերի և այլ տարրերի ստորաբաժանումը վերականգնման աշխատանքների պրակտիկայում հնարավորություն է տալիս ավելի լրիվ օգտագործել դրանց հնարավորությունները, իսկ նոր շինանյութերի կիրառումը նպաստում է հուշարձանների ամրությանը:

Նստաշրջանի արդյունքներն ամփոփեց արվեստի ինստիտուտի դիրեկտոր, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Ռ. Զարյանը: Նա գոհունակությամբ ընդգծեց նստաշրջանում կարդացված թեմաների բազմազանությունը, գիտական խորությունը, որակելով դրանք իբրև Թ. Թորամանյանի սկզբնավորած գործի արգասավոր արդյունքներ:

Ն. Ծ. ՊԱՊՈՒԽՅԱՆ

ԱՆՎԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մայիսի 31-ին Զվարթնոցի հնօրյա կառույցի պարապի ներքո տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ նախագահության նիստը՝ նվիրված Թորոս Թորամանյանի անվան հուշամեդալի հանձնման արարողությանը: Բացելով նիստը՝ ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. *Համբարձումյանն* ասաց, որ հայ ճարտարապետության մեծ երախտավոր Թորոս Թորամանյանի ծառայությունները ըստ արժանվույն գնահատելու, ճարտարապետության բնագավառում նոր թորամանյանական առավել խոր ու բազմակողմանի հետազոտությունները սատարելու նպատակով ստեղծվել է Թ. Թորամանյանի անվան հուշամեդալ, որը այսուհետև կտրվի չորս տարին մեկ՝ գիտության այդ բնագավառի առավել արժանավորին, վաստակած վաստակավորին: Ուշագրավն այն է, որ առաջին անգամ հանձնվող հուշամեդալի միակ ու արժանավոր թեկնածուն ռուս մեծ ժողովրդի զավակ, հայ ճարտարապետության պատմության հետազոտող Նիկոլայ Միխայլովիչ Տոկարսկին է:

Այնուհետև Ն. Մ. Տոկարսկու կյանքն ու գործունեությունը գնահատող համապարփակ զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս *Ծ. Պ. Աղայանը*:

— Հայկական ինքնատիպ ճարտարապետության պատմության առաջին գիտնական-հետազոտողը,— ասաց զեկուցողը,— և վերահաստատողը եղավ Թորոս Թորամանյանը: Ծնվել է 1864-ին, Շապին-Գարահիսարում: Նախ ուսանել է Կ. Պոլսում, ապա՝ Փարիզում (1900 թ.)՝ միաժամանակ ծանոթանալով թանգարանային նյութերին, մշակութային կոթողներին: 1903 թ. գալիս է Հայաստան՝ Ն. Մառի օժանդակությամբ (1904 թ.) չափագրելու պատմական Անիի հուշարձանները: Ն. Մառը նրա մասին գրել է. «Ես առավել առողջ լույս եմ սպասում ճարտարապետական հուշարձանների լեզվից, երբ մենք կսովորենք այն հասկանալ: Թորամանյանի մեջ ես տեսնում եմ այդ լեզվի առաջին ուսուցչին»:

Թորամանյանն արտակարգ եռանդով նվիրվեց Զվարթնոցի ուսումնասիրությանը, որի վերակազմության նախագիծը հրատարակեց 1905 թ.: Նրա ջանքերի ու աշխատակցության շնորհիվ նշանավոր արվեստագետ Ստրժիգովսկին հայ ճարտարապետության մասին գրեց երկու ստվարածավալ հատորներ և եվրոպական գիտության առաջ բաց արեց հայ ճարտարապետության առինքնող նկարագիրը: Թորամանյանի աշխատանքն ավելի արդյունաշատ եղավ սովետական իշխանության տարիներին, ուստի և մեծ երախտավորը նախ արժանացավ գիտության վաստակավոր գործչի կոչման և ապա ՀՍՍՀ ԳԱ նախաձեռնությամբ հրատարակվեցին նրա աշխատությունները (երկու հատորով): Այդ առթիվ Ավետիք Իսահակյանը գրեց. «Թորոս Թորամանյանը իր սիրալի գործերով բոլոր ժամանակների հայ ժողովրդի համար դարձավ Թորոս ճարտարապետ և մեծացավ, պատմականացավ: Եթե ճարտարապետությունը քարացած երաժշտու-